

պարանափոխութիւնը, նոյն իսկ իրենց կրօնական պաշտամանց մէջ մտցնելով յունական դիցաբանութիւնը: Կրթութիւնն և ուսումն ալ ունեցան բաւական յառաջդիմութիւն: Վոսվորացիք Տաւրիոյ արեւելեան կողմեր տարածելով իրենց իշխանութիւն, շինեցին և բարգաւաճ ըրին զՊանտիկապէս յերոսակողման, իսկ ի կողմն Ասիոյ կանգնեցին միւս այլ քաղաք՝ զՓանակորիա: Միլեսացիք՝ Թէոդոսիա քաղաքին հիմնարկութիւնն ըրին, և այնչափ զօրացան՝ որ յաջողեցան վանել զՍոթիրոս թագաւոր Վոսվորի: Բայց Յունաստան ի կէս Բ դարու (նախ քան զՔր.), կորսնցնելով իւր անկախութիւնը, Հռովմայեցւոց մեծազօր պետութեան մարզ կը լինի. տակաւ կը սկսին պոնտական պատերազմունք. պատմական մեծ մարդը, Միհրդատ Եւպատոր (յ'Ա. դարու նախ քան զՔր.) ամուր թումբ կը կանգնի հռոմէական հեղեղաց դէմ. և չի թողուր նոցա լէգէոնաց անարգել ոտնակոխ անել իւր աշխարհը:

Սկիւթացիք յարմար ժամանակ գտնալով, իրենց արօրադիր խոփերը ի սուր և ի սուին կը ձուլեն. և Թէոդոսիոյ վաճառականութիւնը առ ժամանակ մի կանգ կ'առնու:

Միհրդատ մէկ կողմանէ՝ քաջապէս յետ կը մղէ Հռովմայ մեծանուն զօրավարները Սիլլա, Լուկուլլոս և Պոմպէոս. և միւս կողմանէ, իր Դիոփանդոս զօրավարին ձեռքով կը ջախջախէ Սկիւթացւոց ապստամբութիւնն, և Քերսոնեսեան հասարակապետութիւնը, հանդերձ Վոսվորեան թագաւորութեամբ, Քերսոնիսիւ, Պանտիկապէիւ և վաճառաշահն Թէոդոսեաւ, իւր պոնտական թագաւորութեան մարզ կը կացուցանէ առաջին դարուն սկիզբը նախ քան զՔր.: